Արձանագրություն N 2

2026-2027 թվականների Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ հակաուռուցքայինդեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/16» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «24» «Դեկտեմբերի» 2025թ.
ժամը 16:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Հ. Մնացականյան
Հանձնաժողովի անդամներ Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Մնացականյան)

Ընդունել ի գիտություն, որ 11.11.25թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի նոյեմբերի 26-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի նոյեմբերի 27-ին ժամը 11:00-ին: 2025 թվականի նոյեմբերի 28-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Իվաֆարմ» ՍՊԸ	Ivapharm89@gmail.com	08625799
2	«ԱԷՄՋԻ» ՍՊԸ	Amg.llc@list.ru	02863111

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ՝ «Իվաֆարմ» և «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Իվաֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության

04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց 15.12.2025թ. կասեցնել հայտերի գնահատումը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցել մասնակցին համապատասխան շտկումներ անելու մասին՝

««Իվաֆարմ ՍՊԸ»

Հարգելի մասնակից առկա է անհամապատասխանություն, մասնավորապես, 1-ին և 2-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը ներկայացված են թերի: Հետևաբար անհրաժեշտ է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել՝ հստակ նշելով ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները և արտադրողի անվանումները: Անհրաժեշտ է նաև ապահովել չգրանցված դեղերի համար պահանջվող, ինչպես նաև չգրանցված դեղեր ներկայացնելու համար անհրաժեշտ տեղեկանքների ներկայացումը հրավերով սահմանված կարգով՝ ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Տեխնիկական բնութագրերի շտկված տարբերակները անհրաժեշտ է ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ: Կանխավ շնորհակալություն:»:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.3-ում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը չէր բացվում, ինչպես նաև ապրանքի ամբողջական նկարագրում գնահատող հանձնաժողովը արձանագրել էր ևս անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց 15.12.2025թ. կասեցնել հայտերի գնահատումը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցել մասնակցին համապատասխան շտկումներ անելու մասին՝

««ԱԷՄՋԻ» ՍՊԸ

Հարգելի մասնակից առկա է անհամապատասխանություն, մասնավորապես, Հավելված 1.3-ում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը չի բացվում, անհրաժեշտ է շտկել, ինչպես նաև 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ներկայացված է թերի: Հետևաբար անհրաժեշտ է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել՝ հստակ նշելով ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները և արտադրողի անվանումները: Անհրաժեշտ է նաև ապահովել չգրանցված դեղերի համար պահանջվող, ինչպես նաև չգրանցված դեղեր ներկայացնելու համար անհրաժեշտ տեղեկանքների ներկայացումը հրավերով սահմանված կարգով՝ ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Տեխնիկական բնութագրի և Հավելված 1.3-ի շտկված տարբերակները անհրաժեշտ է ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ: Կանխավ շնորհակալություն:»:

Շտկման համար սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգում հասանելի էր մասնակիցների կողմից իրականացված շտկումները և գնահատող հանձնաժողովը գնահատելով շտկված փաստաթղթերը գնահատեց բավարար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը:

- «Իվաֆարմ» ՍՊԸ-ի կողմից իրականացված շտկման արդյունքում արձանագրել է հետևյալը՝ 1-ին չափաբաժնի համար ներկայացվել են և ՀՀ-ում գրանցված դեղեր և չգրանցված դեղեր, ուստի համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշման 2.2 կետի պահանջների՝ չգրանցված դեղերի համար «Իվաֆարմ» ՍՊԸ-ն պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միաժամանակ չգրանցված դեղերի համար պարտադիր պետք է ներկայացնի Առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված հավաստող տեղեկանք՝ ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N 172-Ա որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության կամ ԵԱՏՄ անդամ հանդիսացող երկրներում գրանցված լինելու, կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ունենալու մասին,

ինչպես նաև «Դեղերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի 17-րդ կետով սահմանված ներմուծման մերժման հիմքերի բացակայության մասին: Պայմանագրում կներառվեն միայն հրավերի պահանջներին բավարարող դեղերը:

- «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի կողմից իրականացված շտկումները գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեց բավարար, իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը բացվում էր և հասանելի էր իրական շահառուների մասին տեղեկատվությունը, իսկ տեխնիկական բնութագրի շտկումից հետո «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել են ՀՀ-ում գրանցված դեղեր, ինչը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Հ. Մնացականյան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 27.11.2025թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Հ. Մնացականյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին

(Հ. Մնացականյան)

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/16» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝ «Իվաֆարմ» ՍՊԸ-ն 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով և «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ը 3-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Մնացականյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց.

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/16» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝
   - «Իվաֆարմ» ՍՊԸ-ն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, 11,327,394 ՀՀ դրամ պայմանագրային գումարով.

- «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ն՝ 3-րդ չափաբաժնի մասով, 2,329,020 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/16» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 25.12.2025թ.-ից մինչև 03.01.2026թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Մնացականյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

Գնառաջարկներ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/16

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Անվանումը	Քանակ	Նախահաշվային միավորի գին	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Միավորի գինը	
							Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	1	Իվաֆարմ ՍՊԸ	թիոգուանին	1,700.00	2,857.14	4,857,138.00	5,500,000.00	1,100,000.00	6,600,000.00	4,047,615.00	809,523.00	4,857,138.00	2,380.95	2,857.14
	2	ԱԷՄՋԻ ՍՊԸ	թիոգուանին	1,700.00	2,857.14	4,857,138.00	5,665,250.00	1,133,050.00	6,798,300.00	5,665,250.00	1,133,050.00	6,798,300.00	3,332.50	3,999.00
2	1	Իվաֆարմ ՍՊԸ	ցիկլոսպորին 50մգ	20,800.00	315.06	6,553,248.00	7,500,000.00	1,500,000.00	9,000,000.00	5,391,880.00	1,078,376.00	6,470,256.00	259.23	311.07
	2	ԱԷՄՋԻ ՍՊԸ	ցիկլոսպորին 50մգ	20,800.00	315.06	6,553,248.00	6,916,000.00	1,383,200.00	8,299,200.00	5,461,040.00	1,092,208.00	6,553,248.00	262.55	315.06
3	1	ԱԷՄՋԻ ՍՊԸ	օնդանսետրոն	9,000.00	258.78	2,329,020.00	2,242,500.00	448,500.00	2,691,000.00	1,940,850.00	388,170.00	2,329,020.00	215.65	258.78